ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԸ

1. Պայմանագրի համարը, ամսաթիվը	«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/15» «13» 07 2018թ.
2. Պայմանագրի կողմը	«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ (անվանումը)
3. Պայմանագրի առարկան	Օդային գծերի անվտանգության տեղեկատվական ցուցանակների ձեռքբերում
4. Պայմանագրի գումարը	**4.054.400** ՀՀ դրամ
5. Պայմանագրի գործողության ժամկետը	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից 45 աշխատանքային օր
6. Գնումների կատարման ծածկագիրը	«ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/15»
7. Հայտերի բացման ամսաթիվը	

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐ

N	Պաշտոնը	Անուն Ազգանուն	Ստորագրություն
1.	Մասնաճյուղերը համակարգող տնօրեն	Կ. Մկրտչյան	
2.	Ֆինանսատնտեսագիտական բաժնի պետ	Վ. Մարտիրոսյան	
3.	Մատակարարման բաժնի պետ	Ռ. Ալբերտյան	
4.	Իրավապայմանագրային բաժնի պետ	Կ. Մելքոնյան	
5.	Գլխավոր հաշվապահ	Գ. Մուրադյան	

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № «ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/15»
ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ

ք. Երևան «13» 07 2018թ.

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրենի պաշտոնակատար Ա. Հովակիմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, և

«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը, ի դեմս ընկերության տնօրեն Վ. Իորդանյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Մատակարար) մյուս կողմից,

Յուրաքանչյուրն առանձին այսուհետ՝ Կողմ, իսկ երկուսը միասին հիշատակման դեպքում՝ Կողմեր, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

Հոդված 1. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

i. **«Պայմանագիր»** - Ապրանքի մատակարարման սույն Պայմանագիրը,
ii. **«Ապրանք»** - Մատակարարի կողմից մատակարարվող՝ Պայմանագրի անբաժանելի մասը կազմող Տեխնիկական բնութագրում **նշված Ապրանքը,**
iii. **«Տեխնիկական բնութագիր»** - Ապրանքի ամբողջական նկարագիր, որը բացառում է այլընտրանքային մեկնաբանությունը, ինչպես նաև Ապրանքի անվանումը, Ապրանքի հատկանիշը, չափման միավորը, քանակը, տեսակը, որակը, երաշխիքային ժամկետը, Ապրանքի մատակարարման վայրը, որակի, ինչպես նաև դրանց հետ կապված այլ պահանջների և ընթացակարգերի հստակ նկարագրությունը ներառող փաստաթուղթ (**Հավելված 1**),
iv. **«Գնման ժամանակացույց»** - Ապրանքի մատակարարման ժամանակահատված, որը ներառում է դրա սկիզբն ու ավարտը (**Հավելված 2**),
v. **«Ապրանքի Գին»** - այն գումարը, որը Գնորդը պարտավորվում է վճարել Մատակարարին Ապրանքի յուրաքանչյուր խմբաքանակի դիմաց, որը ներառում է ՀՀ օրենսդրությամբ կիրառելի բոլոր հարկերը: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Մատակարարի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:
vi. **«Վճարման ժամանակացույց»** - այն ժամկետը, որի ընթացքում Գնորդը պարտավոր է վճարել Գինը: Մասնավորապես, Վճարման ժամկետն է Ապրանքի պատշաճ, ամբողջական և լրիվ մատակարարման վրա հիմնված հանձնման-ընդունման ակտի/արձանագրության ստորագրման պահից սկսած 30 աշխատանքային օր ժամկետը (**Հավելված 2**),
vii. **«Ակտ»** - Պայմանագրի մի մասի կատարման արդյունքի հանձնման-ընդունման վերաբերյալ կազմված, Կողմերի միջև ստորագրված փաստաթուղթ (**Հավելված 3**):
viii. **«Հանձնման-ընդունման արձանագրություն»** - Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը հաստատելու վերաբերյալ կազմված, Կողմերի միջև ստորագրված փաստաթուղթ (**Հավելված 5**),

ix. **«Պայմանագրի պայմաններ»** - Պայմանագրի առարկա, Վճարման ժամանակացույց, Պայմանագրի գին, քանակ, տեսակ, որակ, Ապրանքի մատակարարման ժամկետ, երաշխիքային ժամկետ և այլն,

x. **«Ներկայացուցիչ»** - Գնորդի և/կամ Մատակարարի կողմից նշանակված և վերջիններիս կողմից լիազորված անձ: Ներկայացուցիչը լիազորվում է Գնորդի և/կամ Մատակարարի (գլխավոր) տնօրենի կողմից տրված լիազորագրով:

Հոդված 2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2.1 Մատակարարը պարտավորվում է Պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում մատակարարել երրորդ անձանց իրավունքներից ազատ՝ Պայմանագրի Տեխնիկական բնութագրով նախատեսված քանակի, տեսակի և որակի օդային գծերի անվտանգության տեղեկատվական ցուցանակներ (Ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել Ապրանքը, վճարել Գինը՝ համաձայն Գնման ժամանակացույցի:

2.2 Մատակարարը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

Հոդված 3. ԱՊՐԱՆՔԻ (ԵՎ/ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ) ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

3.1 Մատակարարված Ապրանքն ընդունվում է Գնորդի և Մատակարարի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը հաստատվում է Գնորդի և Մատակարարի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով Ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Մատակարարը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը հավաստող փաստաթուղթը, իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը: Ընդ որում Մատակարարը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին, Գնորդը Պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Մատակարարին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատակարարված Ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում Պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և Պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Մատակարարին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի

համար Պայմանագրով նախատեսված միջոցները և Մատակարարի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե Պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված Ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված Ապրանքը համարվում է ընդունված և Պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Մատակարարին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

Հոդված 4. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Գնորդն իրավունք ունի՝

4.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Մատակարարի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են **5 օրից ավելի**,

4.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 2.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու Պայմանագրով նախատեսված տուգանքը,

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը,

4.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրով նախատեսված տույժը,

4.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքից,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և պահանջել վճարելու սույն պայմանագրով նախատեսված տույժը,

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով,

4.1.5 Մատակարարի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Մատակարարից վճարելու Պայմանագրով նախատեսված տույժը,

4.1.6 Մատակարարից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Մատակարարի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը,

4.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Մատակարարն էականորեն խախտել է Պայամագիրը,

4.1.7.1 Մատակարարի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են **5 օրից ավելի,**

4.1.8 Ընդունել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին:

Ապրանքի որակին առաջադրվող պահանջների էական խախտումների դեպքում (չվերացվող թերությունների, ինչպես նաև այնպիսի թերությունների, որոնք չեն կարող վերացվել առանց անհամաչափ ծախսերի կամ ժամանակի կորստի, կամ այնպիսիք, որոնք բազմիցս կամ կրկին ի հայտ են եկել դրանք վերացնելուց հետո, և նման բնույթի այլ թերություններ) Գնորդն իրավունք ունի հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված Գինը:

4.2 Գնորդը պարտավոր է՝

4.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները,

4.2.2 Մատակարարի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Մատակարարին,

4.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Մատակարարին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրով նախատեսված տույժը,

4.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Մատակարարին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից,

4.3 Մատակարարն իրավունք ունի՝

4.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված Ապրանքը,

4.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Մատակարարը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով,

4.3.3 Գնորդից պահանջել վճարելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները,

4.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը,

4.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները,

4.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

4.4 Մատակարարը պարտավոր է՝

4.4.1 Գնորդին հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում,

4.4.2 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում,

4.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք,

4.4.4 Գնորդին հանձնել Պայմանագրի Տեխնիկական բնութագրով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր,

4.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարված Ապրանքը,

4.4.6 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը,

4.4.7 Գնորդին հանձնել Ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը,

4.4.8 Պայմանագրի 4.1.7. կետի հիման վրա Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները,

4.4.9 Պայմանագրի մատակարարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

Հոդված 5. ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1 Պայմանագրով Մատակարարի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է 4.054.400 (չորս միլիոն հիսունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ: «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ-ը չի հանդիսանում ԱԱՀ վճարող:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Մատակարարի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Մատակարարն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

5.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Մատակարարի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության և հաշիվ-ապրանքագրի հիման վրա՝ Պայմանագրի Վճարման ժամանակացույցով նախատեսված ժամկետում:

Հոդված 6. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

6.1 Մատակարարը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

Հոդված 7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Մատակարարը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Մատակարարի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Գնորդն իրավունք ունի Մատակարարից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձել տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Մատակարարին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 2.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Գնորդն իրավունք

ունի Մատակարարից գանձել տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0.05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Վճարման ժամանակացույցով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Մատակարարն իրավունք ունի յուրաքանչյուր ուշացված օրվա համար Գնորդի նկատմամբ հաշվարկել տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1 Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների Ապրանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Հոդված 9. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՎԱՂԱԺԱՄԿԵՏ ԼՈՒԾՈՒՄԸ

9.1. Գնորդի նախաձեռնությամբ Պայմանագիրը կարող է լուծվել՝

9.1.1. Եթե առկա են Ապրանքի նկատմամբ երրորդ անձանց իրավունքներ և/ կամ այլ պահանջներ,

9.1.2. Պայմանագրի 4.1.8. կետով նախատեսված դեպքում,

9.1.3. Եթե Մատակարարը Ապրանքի մատակարարումն ուշացնում է 5 (տասը) և ավելի օր,

9.1.4. Եթե Մատակարարը ողջամիտ ժամկետում չի վերացնում Ապրանքի թերությունները:

Հոդված 10. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

10.1 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10.2 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով՝ 15-օրյա ժամկետում: Նշված ժամկետում համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով: Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

Հոդված 11. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

11.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

11.2 Պայմանագրի շրջանակներում ծանուցումները վավեր են, եթե դրանք ուղարկվել են Կողմերին՝ փոստով (Պայմանագրի 12-րդ կետում նշված հասցեներով) կամ էլեկտրոնային փոստով և ստորագրված են Կողմերի (նրանց ներկայացուցիչների) կողմից:

Կողմերը պարտավոր են միմյանց հայտնել պայմանագրի գործողության ընթացքում իրենց հասցեն փոխելու մասին և նման հաղորդման բացակայության դեպքում ծանուցումներն ուղարկվում են նրանց վերջին հայտնի հասցեով և համարվում են հանձնված:

11.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների մատակարարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Մատակարարը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Մատակարարի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

11.4 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց Կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

11.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում, իսկ եթե Պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ Պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի Կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

11.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

11.7 Պայմանագրի Կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները, ներառյալ՝ Պայմանագրի մատակարարման շրջանակում Մատակարարի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի մատակարարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների մատակարարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Մատակարարը:

11.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել Կողմերի պարտավորությունների մասնակի չմատակարարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի Կողմերի պարտավորությունների մասնակի չմատակարարման կամ ամբողջությամբ լուծման Կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

11.9 Պայմանագիրը կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկ օրինակ:

11.10 Պայմանագիրը բաղկացած է հետևյալ հավելվածներից.

Հավելված 1 – Տեխնիկական բնութագիր,

Հավելված 2 – Գնման ժամանակացույց,

Հավելված 3 – Վճարման ժամանակացույց,

Հավելված 4 – Պայմանագրի մի մասի կատարման արդյունքի հանձնման-ընդունման ակտ,

Հավելված 5 – Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը հաստատելու վերաբերյալ Հանձնման-ընդունման արձանագրություն:

12. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՄԱՏԱԿԱՐԱՐ	ԳՆՈՐԴ
«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ	«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 2-րդ փող., 28տ	Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Ամերիաբանկ» ՓԲԸ	Հայբիզնեսբանկ Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1570024428690100	Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 03540912	ՀՎՀՀ 01522459
_____ Վ. Իորդանյան (ստորագրություն)	_____ Ա.Հովակիմյան (ստորագրություն)

Հավելված N 1

13 / 07 2018 թ. կնքված

ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/15 *ծածկագրով Պայմանագրի*

ԱՊՐԱՆՔԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

h/h	Ապրանքի անվանումը	Տեխնիկական բնութագիրը	Չափման միավոր	քանակը	Արժեքը (ՀՀ դրամ)
1	Անվտանգության տեղեկատվական ցուցանակներ օդային գծերի համար	Նախատեսված են 220/110 կՎ լարման օդային գծերի յուրաքանչյուր հենարանի վրա 2 կողմից ամրացնելու համար: Անվտանգության տեղեկատվական ցուցանակների չափսերը 200x300 մմ, նյութը՝ ցինկապատ թիթեղից 0.8 մմ հաստության: Ցուցանակների վերևի մասում **«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ** տողը պետք է գրված լինի 14 մմ բարձրությամբ տառերով և մգեցված ամբողջ ցուցանակի երկարությամբ: Ցուցանակների այն կողմը, որտեղ պետք է գրված լինեն տեղեկատվությունները ներկված լինի ջրադիմացկուն և ջերմադիմացկուն սպիտակ գույնի ներկով: Ցուցանակների վրայի տեղեկատվությունները պետք է գրված լինեն սև գույնով, շրջանակի մեջ և ջերմադիմացկուն ու ջրադիմացկուն անգույն լաքով լաքապատված: **Օդային գծի լարում, անվանում և հենարան** տողերը պետք է գրված լինեն 17մմ բարձրությամբ տառերով և մգեցված ամբողջ ցուցանակի երկարությամբ: **Օդային գծի անվտանգության գոտի և եզրային հաղորդալարերից հեռավորություն** տողերը պետք է գրված լինի 14մմ բարձրությամբ տառերով և մգեցված ամբողջ ցուցանակի երկարությամբ: **Հեռախոսի համարներ** տողը պետք է գրված լինի14մմ բարձրությամբ տառերով և մգեցված ամբողջ ցուցանակի երկարությամբ: **Գանգը և կարճ միակցման նշանը** պետք է լինի 50 մմ բարձրությամբ ցուցանակի ներքևի աջ և ձախ կողմերում մգեցված: **Հենարանի գծանկարը** պետք է լինի 70 մմ բարձրությամբ և 50 մմ լայնությամբ ցուցանակի ներքևի միջնամասում, մգեցված: Ցուցանակների անկյունների 4 կողմում պետք է լինեն անցքեր 6 մմ տրամագծով: **220 կՎ լարման օդային գծերի համար՝ 1078 հատ, իսկ 110 կՎ լարման օդային գծերի համար՝ 1456:** Ցուցանակների տեսքերը և	հատ	2534	4.054.400

		չափսերը համաձայն կից ներկայացված նմուշների, իսկ հենարանների լարումները, անունները և քանակները՝ կից ներկայացված ցանկի:			
ԸՆԴԱՄԵՆԸ					**4.054.400**
Այլ պայմաններ					
Մատակարարման վայրը		քՔ. Երևան, Զորավար Անդրանիկի 1			

ՄԱՏԱԿԱՐԱՐ

«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 2-րդ փող., 28տ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570024428690100
ՀՎՀՀ 03540912

_____ Վ. Իորդանյան
(ստորագրություն)

ԳՆՈՐԴ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
Հայբիզնեսբանկ Մալաթիա մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

_____ Ա.Հովակիմյան
(ստորագրություն)

Հավելված N 2

«13» 07 2018 թ. կնքված
ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/15 *ծածկագրով Պայմանագրի*

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի մատակարարման ժամկետը	
Ապրանքի մատակարարման սկիզբը	**Ապրանքի մատակարարման ավարտը**
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրվանից հաշված	45 աշխատանքային օրվա ընթացքում

ՄԱՏԱԿԱՐԱՐ
«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 2-րդ փող., 28տ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570024428690100
ՀՎՀՀ 03540912

Վ. Իորդանյան
(ստորագրություն)

ԳՆՈՐԴ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ա.Հովակիմյան
(ստորագրություն)

Հավելված N 3
« 13 » 07 2018 թ. կնքված
***ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/15** ծածկագրով Պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ

Վճարման պայմաններ	Երկկողմանի ստորագրված հաշիվ-ապրանքագրի և հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա, հանձնման-ընդունման արձանագրության երկկողմանի ստորագրվելուց հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում

ՄԱՏԱԿԱՐԱՐ

«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 2-րդ փող., 28տ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570024428690100
ՀՎՀՀ 03540912

Վ. Իորդանյան
(ստորագրություն)

ԳՆՈՐԴ

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

Ա.Հովակիմյան
(ստորագրություն)

Հավելված 4
« 1 » 20 թ. կնքված
***ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/15** ծածկագրով Պայմանագրի*

ՄԱՏԱԿԱՐԱՐ
«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 2-րդ փող., 28տ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570024428690100
ՀՎՀՀ 03540912

ԳՆՈՐԴ
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

ԱԿՏ N

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

Սույնով արձանագրվում է, որ «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության (այսուհետ՝ Գնորդ) և «ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերութան (այսուհետ՝ Մատակարար) միջև 20 թ. ________ -ին կնքված N ***ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/15*** Պայմանագրի շրջանակներում Մատակարարը 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված Ապրանքը.

	Մատակարարված Ապրանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	քանակական ցուցանիշը փաստացի	մատակարարման ժամկետը ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	մատակարարման ժամկետը փաստացի	Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/

Ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն

Ընդունեց

____
ազգանուն, անուն

____
ստորագրություն

Հավելված 5
« » 20 թ. կնքված
***ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/15** ծածկագրով Պայմանագրի*

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ

ՄԱՏԱԿԱՐԱՐ
Հասցե՝ ք. Երևան Անդրանիկի 1
«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ «Մալաթիա» մ/ճ
Հ/Հ 1150001172630300
ՀՎՀՀ 01522459

ԳՆՈՐԴ
«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊԸ
ՀՀ Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ, 2-րդ փող., 28տ
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 1570024428690100
ՀՎՀՀ 03540912

ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № ____
Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու
փաստը հաստատելու վերաբերյալ

«___» _____201_ թ.

ք.Երևան

«Բարձրավոլտ Էլեկտրացանցեր» ՓԲ ընկերությունը, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Հովակիմյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) մի կողմից, **և**

«ԱԼՖԱ ԹՐԵՅԴ» ՍՊ ընկերությունը՝ ի դեմս տնօրեն Վ. Իորդանյան, ով գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Մատակարար), մյուս կողմից,

Հիմք ընդունելով Ապրանքի մատակարարման № **ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/15** պայմանագիրը, կնքեցին սույն Հանձնման-ընդունման արձանագրությունը՝ հետևյալի մասին.

(1) Մատակարարը հանձնում է, իսկ Գնորդն ընդունում է № **ԲԷՑ-ԳՀԱՊՁԲ-18/15** Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Ապրանքը

	Մատակարարված Ապրանքի							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		մատակարարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ Պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

(2) Գնորդը հավաստում է, որ Հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահին Ապրանքը մատակարարվել են Պայմանագրի բոլոր պայմանների պահպանմամբ և որ Գնորդը չունի որևէ պահանջ՝ կապված Ապրանքի մատակարարման հետ:

(3) Կողմերը հավաստում են, որ Հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահին միակ պարտականությունը Պայմանագրով սահմանված Ապրանքի ամբողջ Գնի՝ _____ ՀՀ դրամի վճարման պարտականությունն է:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

«Հաստատում եմ»
«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ
Տեխնիկական տնօրեն

_____ Լևոն Ադամյան

«____» _____ 2018թ.

Աշխատանքի անվտանգության ապահովման նպատակով «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ -ի ՕԳ-երի համար անվտանգության տեղեկատվական ցուցանակների գնման հայտի հավելվածում նշված գնման առարկայի բնութագիրը և ծավալները:

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝
ԱԱԱ և Հ ծառայության պետի ժ/պ Արման Օհանյան

Հավելված 1
Պատասխանատու ստորաբաժանման
արձանագրություն

ԳՆՄԱՆ ՀԱՅՏ

Ընկերության օդային գծերի համար ավտանգության տեղեկատվական ցուցանակների գնման թվով 1 չափաբաժին

Չափաբաժին	Անվանումը	Չափի միավորը	Քանակը հատ	Գնման առարկայի բնութագիրը
1	Ավտանգության տեղեկատվական ցուցանակներ	հատ	2534	**Ավտանգության տեղեկատվական ցուցանակները** նախատեսված են 220/110 կՎ լարման օդային գծերի յուրաքանչյուր հենարանի վրա 2 կողմից ամրացնելու համար: Ավտանգության տեղեկատվական ցուցանակների չափերը՝ 200 X 300 մմ, նյութը՝ ցինկապատ թիթեղից 0.8 մմ հաստության: Ցուցանակների վերևի մասում **«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲԸ** տողը պետք է գրված լինեն 14 մմ բարձրությամբ տեռերով և մգեցված ամբողջ ցուցանակի երկարությամբ: Ցուցանակների այն կողմը, որտեղ պետք է գրված լինեն տեղեկատվությունները ներկված լինի ջրադիմացկուն և ջերմադիմացկուն սպիտակ գույնի ներկով: Ցուցանակների վրայի տեղեկատվությունները պետք է գրված լինեն սև գույնով, շրջանակի մեջ և ջերմադիմացկուն ու ջրադիմացկուն անգույն լաքով լաքապատված: **Օդային գծի լարում, անվանում և հենարան** տողերը պետք է գրված լինեն 17 մմ բարձրությամբ տառերով և մգեցված ամբողջ ցուցանակի երկարությամբ: **Օդային գծի անվտանգության գոտի և եզրային հաղորդալարերից հեռավորություն** տողերը պետք է գրված լինեն 14 մմ բարձրությամբ տառերով և մգեցված ամբողջ ցուցանակի երկարությամբ: **Հեռախոսի համարներ** տողը պետք է գրված լինի 14 մմ բարձրությամբ տառերով և մգեցված ամբողջ ցուցանակի երկարությամբ: **Գանգը** և **կարճ միակցման նշանը** պետք է լինի 50 մմ բարձրությամբ ցուցանակի ներքևի աջ և ձախ կողմերում մգեցված: **Հենարանի գծանկարը** պետք է լինի 70 մմ բարձրությամբ և 50 մմ լայնությամբ ցուցանակի ներքևի միջնամասում, մգեցված: Ցուցանակների անկյունների 4 կողմում պետք է լինի անցքեր 6 մմ տրամագծով: **220 կՎ լարման օդային գծերի համար՝ 1078 հատ, իսկ 110 կՎ լարման օդային գծերի համար՝ 1456:** Ցուցանակների տեսքերը և չափերը համաձայն կից ներկայացված նմուշների, իսկ հենարանների լարումները, անունները և քանակները՝ կից ներկայացված ցանկի:

Այլ պայմաններ	
Գնումներին մասնակցելու իրավունքը և որակավորման չափանիշները	Մասնակիցը պետք է բավարարի «Գնումների մասին » ՀՀ օրենքի և «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի ՀՀ կառ. 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ նախատեսված պահանջներին; **Մասնակիցը պետք է ներկայացնի գնման հայտում նշված ներկերի և անգույն լաքի (ջերմադիմացկուն ու ջրադիմացկուն) որակի հավաստագիր:**
Վճարման պայմաններ	հանձման-ընդունման ակտի հիման վրա մինչև 30 աշխատանքային օր
Գնման ձևը (ընթացակարգը)	Գնանշման հարցում ընթացակարգ
Կատարման վայրը	Ք. Երևան, Անդրանիկի 1

ապրանքի մատուցման ժամկետը	
սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրից	45 աշխատանքային օր

Պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝
ԱԱԱ և Հ ծառայության առաջատար ճարտարագետ Արման Օհանյան

Գնման հայտը նախագծած ներկայացուցիչ՝
ԱԱԱ և Հ ծառայության առաջատար ճարտարագետ Նիկոլ Հակոբյան